

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հ. Փափազյան

ԱՆԱՆՈՒՆ ՏԱԶԻԿ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (10-րդ դար)

Ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդի աշխատասիրությամբ 1930 թ. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի կողմից լուսատիպ հրատարակությամբ լույս է տեսել ձեռագրի այն միակ օրինակը, որը արևելագիտության մեջ ծանոթ է որպես «Տումանյանի ձեռագիրը» կամ «Հուզուդ-ալ-ալամ»:

Ձեռագիրը գտնվել է 1892 թ. Բուխարայում ուսուցիչական Ալեքսանդր Տումանյանի կողմից և հանդիսանում է Միջին Ասիական «ղարի» լեզվով գրված աշխարհագրության արժեքավոր հուշարձաններից մեկը: Սակայն մինչև օրս բնագիրը լրիվ կերպով ուսման չի թարգմանված:

Դժբախտարար ձեռագրի հեղինակի անունը հնարավոր չէ պարզել: Նա հավանաբար եղել է աշխարհահռչակ բժիշկ և փիլիսոփա Արուստիս Իրն-Սինայի ժամանակակիցներից: Պարզ է միայն, որ նա գրքի վրա սկսել է աշխատել սկսած հիշրեթի 372 թ. (982): Աշխատությունը գրվել է Միջին Ասիական (տաջիկական) Սամանիդյան պետության Գուզգանի մարզում (այժմ Հյուսիսային Ավղանիստանի Մեզար-ե Շարիֆի նահանգ), նույն շրջանի նահանգապետ Արուստիս Մուհամեդ Իրն-Ահմեդի պատվերով: Ձեռագիրը բաղկացած է 39 թերթից (20.13 սմ), ընդօրինակությունը «նասի» գրությամբ կատարված է հիշրեթի 656 թ. (1258) զրիշ Արուստի Մուսայիդ Արդալ-կայուն Իրն-ալ-Հուսեյն Իրն-ալ-Ֆարսիի կողմից: Գրքության վայրը անհայտ է:

Ինչպես ապացուցում է ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը, անանուն հեղինակը մեծ չափով օգտվել է իրեն նախորդող արաբական և Միջին Ասիական այլ աշխարհագիրների աշխատություններից, որոնց անունները, սակայն չի հիշել: Ոչ մի փաստ չկա այն մասին, որ հեղինակը շրջագայած լինի իր նկարագրած երկրներից թեկուզ մի քանիսը, իսկ ընդհանրապես, բոլոր փաստերը խոսում են հօգուտ այն բանի, որ նա իր աշխատությունը շարադրել է հիմնականում հիֆ ունենալով մինչ այդ գոյություն ունեցած գրավոր աղբյուրները, օգտվելով նաև բանավոր տեղեկություններից: Փաստեր կան պնդելու, որ անանուն հեղինակը օգտագործել է իսթախրու, Բախիթի, Մասուդու և Իրն-Հուսեյնի աշխատությունները, ինչպես նաև ուրիշ հեղինակների պարսկերեն աշխատությունները, որոնք թերևս չեն հասել մեզ: Ակնհայտ է սակայն, որ ձեռագրի մեջ հիշատակված որոշ տեղանուններ բոլորովին չկան վերը հիշված մեզ հայտնի հեղինակների մոտ, որոնք, հավանաբար, վերցված են մեզ անծանոթ պարսկերեն աղբյուրներից: Հօգուտ այս ենթադրության են խոսում այն բոլոր տեղանունները, որոնք գրված են իրենց հարադատ արտասանությամբ և առանց ենթակված լինելու արաբական տառադարձության:

¹ В. В. Бартольд, Худуд-Ал-Алем, рукопись Туманского, Ленинград, 1930. Շեղադրո ա-երր փոխարինում են օ հնչյունին:

² Անգրկովկասի վերաբերող հատվածները վրացերեն թարգմանել է Վ. Փոլուրի-ձեն: Տես ისტაბრო, ჰოდუდ ალ-ალემი, ჰამდალლამ ყაზვინი, Թբილისი համալսարանի հրատ., Թբილისი, 1937:

³ Տես А. Ю. Якубовский, Абу Али ибн Сина и его время, „Вопросы истории“, 1952, № 9, էջ 93:

⁴ В. В. Бартольд, Худуд-Ал-Алем, рукопись туманского, Ленинград, 1930, 13—17.

Աշխատութիւնը բաղկացած է 60 զլիւից, որոնցից սկզբի յոթ զլուխները հատկացված են Հին աշխարհի ընդհանուր նկարագրութեանը, ուր զլխավորաբար խոսվում է երկրի ֆիզիկական աշխարհագրութեան մասին: Խփարկվում են բոլոր լեռները, գետերը, ծովերը, անապատները Արևելքից Արևմուտք, այնուհետև՝ 8-րդ զլխից սկսած նկարագրվում է այդ ժամանակի աշխարհագրութեանը ծանոթ բոլոր երկրները՝ սկսած Քաղաղականի արևելքից մինչև Ատլանտյան օվկիանոսը:

Ըստ ձեռագրի սկզբում ղեկավարված զլուխների ցանկի 35-րդ զլուխը հատկացված է Հարավային Ադրբեջանին, իսկ 36-րդ զլուխը Հայաստանին, Հյուսիսային Ադրբեջանին և Արևելյան Վրաստանին: Սակայն տեքստի շարադրման ընթացքում այդ երկու զլուխները միացված են մի ընդհանուր վերնագրի տակ՝ «Խոսք Ադրբայջանի մարզի (Հարավային Ադրբեջան—Հ. Փ.) Արմինիայի (Հայաստան—Հ. Փ.) ու Արրանի (Հյուսիսային Ադրբեջան—Հ. Փ.) մարզերի և նրանց քաղաքների մասին»:

Հայաստանի, Ադրբեջանի և մասամբ նաև Վրաստանի ֆիզիկական աշխարհագրութեանը վերաբերվող տեղեկութիւնները, ինչպես յիշելիք, տրված են սկզբի 3-րդ, 5-րդ և 6-րդ զլուխներում, որոնցից 3-րդում խոսվում է օռվերի, 5-րդում լեռների, իսկ 6-րդում՝ գետերի մասին: Այս տեղեկութիւնները թեև չափազանց կցկտուր, բայց և որոշ չափով յուրահատուկ են:

Արարական խալիֆութում Հայաստանը, Հյուսիսային Ադրբեջանը և Արևելյան Վրաստանը կազմում էին մեկ վարչական միավոր, սկզբում Դվին, ապա որոշ ժամանակ նաև Պարտավ կենտրոնով: Արարական աշխարհին ամենից ավելի մոտ շրջանները եղել են Հայաստանի հարավային և հարավ-արևմտյան շրջանները, այդ պատճառով էլ մինչև Կովկասյան լեռները ձգվող ամբողջ տերիտորիան կոչվում էր «Արմինիայի նահանգ»:

«Հուգուդ-ալ-ալամը» արժեքավոր է նաև այն տեսակետից, որ այնտեղ առաջին անգամ փորձ է արվում ազատվելու արարական աշխարհագրութեան տրագիցիաներից: Այստեղ արդեն «Արմինիա» է անվանվում միայն Հայաստանը: Սակայն որքանով որ հեղինակը իր տեղեկութիւնները մեծ մասը քաղել է արար աշխարհագիրներից, զրքի մեջ տեղ են գտել որոշ աշխարհագրական անճշտութիւններ, որոնք կրում են խալիֆաթի կողմից կատարված վարչական բաժանման հետքերը և արդյունք են Արմինիայի մասին նախկին սխալ պատկերացման:

Այսուհանգերձ հեղինակը հատկապես նշում է, որ այս երկրները «իբար են միացած և նրանց հողերը ըրաբ րառնկած» (ընդգծումը մերն է—Հ. Փ.), որով և պայմանավորվում էր ներքին կյանքի և սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների սերտ համամանուկութիւնը վերահիշյալ երկրներում: Կարելի է չկասկածել, որ արտադրահարաբերութիւնները երբեք երկրներում էլ համարյա նույնն են եղել, դա համար էլ տրված բոլոր տեղեկութիւնները՝ զրուդատնտեսական արտադրութեան, մասամբ նաև քաղաքների, արհեստների և առևտրի մասին, որոնք վերագրվում են երեք երկրներից ունեցող հեղինակին, կարող են վերաբերել նաև մյուս երկուսին:

Ինչպես տեսանք, Հուգուդ-ալ-ալամի հեղինակը իր աշխատութիւնը սկսել է զրել մեր թվականութեան 982 թ., որը համընկնում է այն շրջանին, երբ Հայաստանում Անիի Բագրատունյաց թագավորութիւնից բացի գոյութիւն ունեին նաև տեղական չորս մանր թագավորութիւններ՝ Արծրունյաց Վասպուրականի թագավորութիւնը, Բագրատունյաց Վանանդի (Կարս) թագավորութիւնը, Աշոտ 3-րդի որդի Գուրգենի Կյուրիկյան թագավորութիւնը և Տաշիր-Ջորագետում և Սյունյաց գահերեց իշխան Սմբատի նորակազմ թագավորութիւնը: Սակայն բացի այս վերջինից մեր հեղինակը մյուսներին մասին ոչ մի տեղեկութիւն չի տալիս և ենթարկվելով արարական աղբյուրների ազդեցութեան, չի խոսում Բագրատունյաց թագավորութեան մասին, որով և լրիվ մոռացութեան են տրված Հայաստանի այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Անին, Կարսը, Արզնը, Երզնկան, Երվանդաշենը և այլն: Նույնը պետք է ասել նաև Վասպուրականի և Տաշիր-Ջորագետի թագավորութիւնների վերաբերյալ: Սխալ չի լինի եթե ասենք, որ հեղինակի տեսադաշտից դուրս են մնացել հատկապես այն շրջանները, որոնք ունեցել են բացառապես հայկական բնակչութիւն, եղել են միանգամայն անկախ և ճանաչված չեն եղել Սամանիդյան պետութեան կողմից, Այս տեսակետից հատկանշական է, որ խոսելով Սիսականի մասին, որպես Հա-

¹ «Հայ ժողովրդի պատմութիւն», I մաս, Երևան, 1951, զլուխ 15-րդ:

յաստանի քաղաքներից և շրջաններից մեկը, հեղինակը ավելացնում է, որ այստեղ «Սրմ-
բատի թաղավորությունն է՝ Այսպիսով, ուրեմն միայն Սյունիքի հայկական թաղավորու-
թյունն է հեղինակի կողմից համարվել հիշատակության արժանի, որովհետև այն պաշ-
տոնապետ անաչված էր Սամանիդյան պետության կողմից»:

Նույն ժամանակաշրջանի համար որպես ֆեոդալական ինքնուրույն իշխանության
կենտրոններ նշված են Աղբրեջանի Արդարիլ, Պարտավ, Շամախի և Ահար քաղաքները:

Հուգուդ-ալ-ալամում արժեքավոր են հատկապես քաղաքների բնակչության ու զր-
խավոր արտադրության մասին տրված տեղեկությունները: Ինչպես սկզբի ընդհանուր դի-
տողությունների բաժնում, այնպես և յուրաքանչյուր քաղաքի մասին առանձին տրված
տեղեկությունների մեջ, նշված է տվյալ քաղաքի կամ մարդի զխավոր արտադրությունը,
որը մեղ հնարավորություն է տալիս մոտավոր գաղափար կազմելու քաղաքների բնակչու-
թյան սոցիալական կազմի, արհեստագործության տեխնիկայի մակարդակի և արտահան-
վող ապրանքների մասին՝ զարգացող ֆեոդալիզմի դարաշրջանում:

Պարզվում է, որ 10-րդ դարում Հայաստանից ու Աղբրեջանից արտահանվում էին
հետևյալ դուղատնտեսական ու արհեստագործական ապրանքները՝ հացահատիկներ, ձուկ
(հիշված է միայն Արսբսի ձկների մասին, հավանաբար «Շուրմահի»)՝ մեղր, բամբակ,
մետաքս, ներկեր (որդան կարմիր և այլ բուսական ներկեր), աղեկարեր, մոմ, գորգեր,
կապերտներ, բրդե հագուստներ, խոնջաններ (շալվարբանդ) և անտառանյութ:

Հիշված ապրանքների մեծ մասի վերաբերյալ հիշատակություններ կան նաև արաբական
այլ և այլ աղբյուրներում: Սակայն այստեղ այդ բոլորը ի մի են բերված, ինչ որ ապացու-
ցում է աշխատության կոմպիլատիվ բնույթը, և կատարված են որոշ լրացումներ: Չի կարելի
բացասել նաև այն հանգամանքը, որ Միջին Ասիական Սամանիդյան պետությունը 10-րդ
դարում առևտրական կապերով կապված լինելով Անդրկովկասի հետ, ներմուծում էր վե-
րոհիչյալ ապրանքները, որոնք կյանքում ծանոթ են եղել հեղինակին և որոնց մասին նա
սովելի մանրամասն կարող էր տեղեկանալ նաև դեպի Անդրկովկաս երթևեկող վաճառական-
ներին:

Հուգուդ-ալ-ալամի հեղինակի ինքնուրույնությունը հատկապես երևան է գալիս աշ-
խարհագրական տեղանունների արտասանության ճշտման խնդրում, որոնք, ինչպես վերը
նշվեց, շատ տեղերում տրված են ոչ թե արաբական, այլ տաջիկական տառադարձությամբ:
Այսպես, օրինակ, արաբական մատենագրության մեջ ընդունված «Դարիլի» փոխարեն
այստեղ կարդում ենք «Դվին», «Մալազջերդի» փոխարեն՝ «Մալազգերդ», «Սիսամանի» փո-
խարեն՝ «Սիսական» և այլն:

Սույն հոդվածի սահմաններում մենք նպատակ չունենք բազմակողմանի վերլուծու-
թյան ենթարկել առաջարկվող սկզբնաղբյուրի բոլոր առավելություններն ու թերություն-
ները, այդպիսի ընդարձակ վերլուծությունը պահանջում է ավելի խորը և մանրակրկիտ
աշխատանք, որը այժմ հեռու է մեր նպատակից: Ստորև հրապարակելով եղբայրական
տաջիկ ժողովրդի կուլտուրական հարուստ ժառանգության այս բավականին օրիգինալ և
արժեքավոր հուշարձանի՝ Հայաստանին, Աղբրեջանին, մասամբ նաև Արևելյան Վրաստա-
նին վերաբերող հատվածի թարգմանությունը, մենք հույս ունենք, որ այն կօգտագործվի
Անդրկովկասի ժողովուրդների համապատասխան շրջանի պատմությունը ուսումնասիրողների
կողմից և որոշ չափով կնպաստի ընդլայնելու մեր գիտելիքներն ինչպես Հայաստանի,
այնպես նաև եղբայրական ռեսպուբլիկաներ՝ Աղբրեջանի ու Վրաստանի պատմական աշ-
խարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին 10-րդ դարում:

ԱՇԽԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՔԻՑ ՄԻՆՁԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔ

Խոսք ծովերի և ծոցերի տեղադրության մասին

... Երկրորդը Քարուղան¹ ծովն է Արմինիայում, որի երկարությունը
50 ֆարսանգ է, իսկ լայնքը 30 ֆարսանգ: Այս ծովի մեջ կա մի գյուղ,

¹ Տե՛ս Ս. Ուրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 300:

² Ակադ. Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան,
1940:

որը կոչվում է Քարուղան և այս ծոֆն էլ այս գյուղի տնունով է կոչվում։ Նրա (ծովի) շուրջը շենուկյուն է, և ջրի աղիության պատճառով նրա մեջ ոչ մի կենդանի չի ապրում, բացի որդից։

Խոսք լեռների և երանց մեջ եղած հանքերի մասին՝

... Մյուսը մի փոքրիկ լեռ է Ագրրադազանի⁵ մարզում, որը կոչվում է Սարալան⁶։

Մյուսը Արմինիա՛յի կողմերում մի լեռ է, որը սկիզբ է առնում Արադից, Թեքրիթից, Այնտեղ նրան Բարմա են կոչում։ Այսպես նա անցնում է Ագրրադազանի և Արբանի⁵ սահմանամիջով և հասնում է Բարդա՛յի⁶ սահմաններին⁷։

Եվս երկու լեռներ կան այս նույն մարզում, իրարից անջատ, մեկը ավելի մեծ, որը կոչվում է Հարեթ։ Նրա գագաթը անկարելի է ըարձրանալ ճամբի դժվարության պատճառով և վրան շարունակ ձյուն կա և ցուրտ է լինում։ Արմինիա՛յի քաղաքների մեծ մասի վառելափայտը և որսը այս լեռից է։ Մյուսը կոչվում է Հուվա՛յրա՛թ, սա էլ նրա նման է, բայց Հարեթից ավելի փոքր է⁸։

Զա՛ղիրա՛յի մարզում կան երկու լեռներ իրարից անջատ, մեկը կոչվում է Ջուդա⁹, սա այն լեռն է, որի վրա Նոյի տապանն է կանգ առել։ Մյուսը կոչվում է Մարդինի լեռ, Նա՛սիրինի մոտակայքում։

... Իսկ Շամի (Սիրիա) մարզում կա մի լեռ, որ անցնում է Միսրի (Եգիպտոս) և Շամի սահմանով, այն վայրից, որ կոչվում է Բսրայելացիների Անապատ։ Նրան մոտ և կպած մի ըարձր լեռ կա, որը կոչվում է Սինայի լեռ։ Այս լեռը ուղիղ անցնում է Շամով [դեպի] Հյուսիս-արևելք մինչև Զա՛որի սահմանը, մինչև Դիմա՛շկ (Դամասկոս), ապա անցնում է Բա՛ալ-բա՛կի, Հիմսի և Բա՛ղրա՛սի հյուսիսով, անցնում է Ջեյուն գետով մինչև Արմինիա՛յի և Ռումի¹⁰ սահմանը։ Այնուհետև ուղիղ իջնում է դեպի Հյուսիս Արմինիա՛յի և Ռումի միջով մինչև Սա՛րիբի¹¹ և Ռումի սահմանի սկիզբը։ Ապա թեքվում է արևելքի կողմից և անցնում Սարիբի, Արմինիա՛յի, Արբանի և Կա՛բկի¹² միջով մինչև Խա՛զա՛րների ծովը՝ Այստեղից շուտ է գալիս, թեքվում է ու վերադառնում դեպի արևմուտք ու շարունակում անցնել Սա՛րիբով ու Խա՛զա՛րների երկրով¹³ մինչև հասնում է Ալան-ների¹⁴ սահմանը։ Այնուհետև Հյուսիսից ուղիղ իջնում է մինչև Խազարների երկրի վերջը, Հետո կտրում անցնում է Խազարական Բիջնակի¹⁵ մարզի և Ուռուսի միջի Բուղարի¹⁶ միջով մինչև Սաղլաբի¹⁷ սահմանները, ապա Սաղլաբի միջով իջնում է Հյուսիսի մարզը և անցնում է Սաղլաբի այն քաղաքով, որը կոչվում է Խարաբ և հասնում Սաղլաբի վերջը, ուր և ընդհատվում է։ Իսկ այն տեղից, որ Սինայի լեռն է մինչև Զա՛որ, այս լեռը կոչվում է Ժահ և նրա վրա շեն վայրեր կան, իսկ նրա մոտ ամբողջ եկվորներ են։ Զա՛որի սահմանից մինչև Դիմա՛շկ կոչվում է Բա՛կա, Դիմա՛շկից մինչև Հիմսի սահմանը կոչվում է Լիբնան, Հիմսից մինչև Բա՛ղրա՛սի սահմանը կոչվում է Դա՛հրու՛թուղ, Բա՛ղրա՛սի սահմանից մինչև Սա՛րիբի սկիզբը կոչվում է Լոֆամ¹⁸, Սա՛րիբի սկզբից մինչև այնտեղ, որ նա թեքումներ է կատարում և հասնում Ալանների երկրի սկիզբը, կոչվում է Կա՛բկ։ Ապա այստեղից մինչև ընդհատման վայրը ամեն տեղ իրեն կից մարզի ու քաղաքի անունով է կոչվում, ինչպես մյուս լեռները։

Բայց երբ [այս լեռը] հասնում է Շամի վերջին և Ա՛րմինիա՛յի սկզբին, մի մեծ ճյուղ է նրանից անջատվում և մտնում Ռու՛մի մարզը¹⁹։ Սա ունի շատ ճյուղեր, որոնց մեջ ոսկու շատ հանքեր կան։ Սարիբի սահմանի սկզբից մի ճյուղ էլ ձգվում է մինչև Քորգերի ծովը²⁰։ Երբ Սա՛րիբի կենտրոնին է հասնում, մի մեծ ճյուղ է նրանից բաժանվում և շարունակում ձգվել այդ երկու լեռների միջով դեպի արևելք, մինչև հասնում է մի բերդի։ Այս բերդը մի քաղաք է լեռան վրա, որտեղ ամեն օր հերթափոխությամբ հազար մարդ բերդի դուռն են պաշտպանում²¹։ Այստեղ կան ոսկու և կապսրի հանքեր։

Խոսք գետերի մասին

... Ա՛րմինիա՛յի լեռից երկու գետեր են հոսում, որոնք կոչվում են Զարեր²², մեկը կոչվում է Մեծ Զար, իսկ մյուսը Փոքր Զար²³։ [Սրանք] հոսում են հարավ-արևմուտքով և այսպես անցնելով, Հա՛ղթիա՛ և Սան քաղաքների արանքում, թափվում են Դեջերի²⁴ մեջ։

Այնուհետև երկու գետեր են, մեկը կոչվում է Սաս²⁵, որը բխում է Ա՛րմինիա՛յի լեռից և գործածվում է ցանքերում [ոռոգման համար] և երբ հասնում է Ա՛րբորա քաղաքին, նրանից ոչինչ չի մնում, իսկ մյուս գետը, որ բխում է այս լեռից, կոչվում է Նահրավան, գործածվում է ցանքերում և երբ հասնում է Նահրավան քաղաքին, [նրանից] ոչինչ չի մնում։

Մյուսը Ֆարաթ²⁶ գետն է, որը Ա՛լիկ²⁷ լեռից է բխում և, Ռու՛մի մարզն ու Լոգրամ լեռան արանքը կտրելով, անցնում է մինչև Մալաթիայի կողմերը և այսպես դեպի հարավ [հոսելով] անցնում է Շամիշատ (Սամո-ոատ) ... Մյուսը մի գետ է, որին Սրիդ Ռուդ²⁸ են կոչում։ Բխում է Հու-վայրաթ լեռից Ա՛րմինիայի մարզում, հոսում է դեպի արևմուտք, անցնում է Գիլանի միջով և թափվում Խազարների²⁹ ծովը։ Այնուհետև մի գետ է, որը Արոս³⁰ է կոչվում, հոսում է Ա՛րմինիայի լեռան արևելքից, այն մասից, որ միացած է Ռումին և ուղղությունն վերցրած դեպի արևելք, շարունակում է հոսել, այս անցնում է Վարթանով³¹ և Ա՛դրբադազանի, Ա՛րմինիայի և Ա՛րբանի սահմանամիջով, թափվում է Խազարների ծովը։

Ապա Քորլ³² գետն է Ա՛րբանում, Բխում է այն լեռից, որը գտնւ-վում է Ա՛րբանի ու Սարիբի արանքում և հոսում է դեպի Արևմուտք և հասնում մինչև Շաքիի ու Գարսիայի³³ սահմանները, այս անցնում է Բերդիջով³⁴ ու միանում է Արես գետին և երկուսը միասին հոսում են Մուկանի³⁵ ու Բաքվի սահմանամիջով և թափվում Խազարների ծովը։

Խոսք Ա՛դրբադազանի մարզի, Ա՛րմինիայի ու Ա՛րբանի մարզերի եվ նրանց քաղաքների մասին

Երեք մարզեր են, իրար միացած և նրանց հողերը իրար խառնված։ Այս մարզի արևելքում Գիլանի³⁶ սահմանն է, հարավում Արաղն³⁷ է ու Ջաղիրան³⁸, արևմուտքում Ռու՛մն է ու Սարիբը։ Իսկ նյութիսում Սարիբի ու Ղուզրանի³⁹ սահմաններն են։ Այս վայրերը իսլամական աշխարհի ամե-նարարները մարզերն են։

Այս մարզ[եր]ը չեն են, ջրառատ, լի բարիքներով և հաճելի մրգերով։ Այստեղ շատ են վաճառականներ և մուսուլման զինվորներ⁴⁰, [ինչպես նաև] շատ օտարականներ⁴¹ տարբեր վայրերից։ Այստեղ արտադրվում է կարմիր (կիրմիզ) ներկ, բրդի անդրավարտիկ և հագուստներ⁴², աղելաբեր⁴³,

բամբակ, ձուկ, մեղր և մոմ։ Այստեղ են ներմուծվում⁴⁴ հույն, հայ, պե-
շենեգ, խազար և սլավոն ստրուկներ։

Արդավիլ—Աղբբազանցանի կենտրոնն է։ Թոշոր քաղաք է, շուրջը պա-
րբսպապատ։ Մի ամուր և լիառատ քաղաք էր, այժմ նվազել է։ Աղբրա-
դազանի թաղավորների աթոռանիստ քաղաքն է։ Այստեղ արտադրվում են
գծավոր և գունավոր հագուստներ։

Ուշնուհ⁴⁵, Սարավ⁴⁶, Միանն⁴⁷, Խունն⁴⁸, Ջարրուկան⁴⁹—փոքրիկ քաղաք-
ներ են, շեն և բարերեր, խիտ բնակչությամբ։

Թաբրիզ—մի փոքրիկ շեն և բարերեր քաղաք է, ունի պարիսպ, որը
Ալա-Իրն-Ահմադն⁵⁰ է կառուցել։

Մարաղա—Մի մեծ, կանաչազարդ ու բարերեր քաղաք է, հոսող ջրե-
րով ու կանաչազարդ այգիներով։ Մի ամուր պարիսպ ուներ, որը Արու-
Սաջի որդին⁵¹ կործանեց։

Բարզանդ⁵²—կանաչազարդ, շեն ու ջրառատ քաղաք է, առատ ցան-
քերով ու հացահատիկներով։ Այստեղ արտադրվում են թավշյա հագուստ-
ներ։

Մուկան—քաղաք է, որն ունի իր մարզը տեղադրված ծովի ափին։
Մուկանի մարզում երկու այլ փոքրիկ քաղաքներ էլ կան, որոնք նույն-
պես Մուկան են կոչվում։ Այստեղ արտադրվում են աղելարեր, հացահա-
տիկներ և մեծ քանակությամբ ջվալ և քուրծ։

Վաբքան—մի բարերեր քաղաք է, որտեղ արտադրվում է նամազի
փաթիլ⁵³ և կապերտ։

Այս բոլոր քաղաքները, որ հիշեցինք, Աղբբազանցանից են։

Դվին⁵⁴—Խոշոր քաղաք է, Արմինիայի կենտրոնը։ Շրջապատված է
պարսպով։ Այստեղ շատ քրիստոնյաներ կան։ Բարիքներով լի հարուստ
քաղաք է, ունի շատ բնակչություն և մեծ թվով վաճառականներ։ Նրան
պատկանող հողերը շատ են և հասնում են մինչև Ջաղիրայի սահմանները,
իսկ ինքը Ռուսին է միացած։ Այնտեղ կա մի տեսակ որդ, որից կարմիր
(կիրմիզ) ներկ են պատրաստում։ Այստեղ արտադրվում են նաև ընտիր
շալվարբանդներ (խոնջաններ)։

Դախըկան⁵⁵—մի փոքրիկ, կանաչազարդ և ջրառատ քաղաք է Դա՛րու-
դան ծովի մոտ։

Ուրմիա⁵⁶—մեծ քաղաք է, շեն և բարերեր։

Սալմաս—մի փոքրիկ, շեն ու կանաչազարդ քաղաք է, որտեղ արտա-
դրվում են ընտիր շալվարբանդներ։

Խոյ, Բերկրի, Արջիջ (Արնեջ), Ախլար, Նախջվան, Բոդլիս (Բիրլիս)—
սրանք բոլորը փոքրիկ քաղաքներ են [մեկը մյուսից] փոքր կամ մեծ—
կանաչազարդ ու բարերեր, մարդաշատ, հարուստ և շատ վաճառականնե-
րով։ Այս քաղաքներում մեծ քանակությամբ գորգեր⁵⁷ և այլ կապերտներ
շալվարբանդ և փայտ է արտադրվում։

Մալազգերդ—սահմանամերձ բերդ է հույների դեմ, [այնտեղ կան]
ռազմիկ մարդիկ։ Բարերեր տեղ է։

Կալիկլա՛ (Կարին)⁵⁸—քաղաք է, որի մեջ կա մի ամուր բերդ, այդ
բերդում շարունակ զանազան վայրերից մուսուլման զինվորներ են լինում
հերթափոխույթյամբ։ Այստեղ շատ վաճառականներ կան։

Միաֆարդին⁵⁹—պարսպապատ քաղաք է Արմինիա՛յի, Ջաղիրա՛յի և Ռուժի սահմանագլխում։

Մա՛րա՛նդ⁶⁰—շեն ու բերքառատ փոքրիկ քաղաք է խիտ բնակչու-թյամբ։ Այստեղ արտադրվում են զանազան տեսակի բրդե հագուստներ։ Մեյմադ⁶¹—հռչակավոր, շեն ու լիառատ ու մարդաշատ մարզ է։

Ա՛հա՛ր⁶²—Մեյմա՛դի կենտրոնն է, Ռա՛վադի որդու (Աբլհաջի) թագա-վորությունը՝ Ջուլա՛նգների կամ Գա՛րգա՛րի սերունդներից այն, որ ուժով գրավեց ամբողջ նավը⁶³։

Սիսա՛կան⁶⁴—քաղաք է, որն ունի մեծ մարզ և Մմրատի⁶⁵ թագավո-րությունն է։

Այս բոլոր փոքրիկ քաղաքները, որ ասացինք, Արմինիա՛յից են։

Կա՛բան—կանաչավարդ քաղաք է, որտեղ մեծ քանակությամբ բնտիր բամբակ է արտադրվում։

Թա՛րդա՛—մի մեծ ու բարիքներով լի քաղաք է։ Ա՛րրանի կենտրոնն է, այս մարզի թագավորների աթոռանիստ քաղաքը։ Նրան պատկանող հողերը կանաչավարդ են, խիտ ցանքերով և առատ հացահատիկներով ու մրգերով։ Այստեղ ճանապարհների եզրերին կան շատ թթի ծառեր։ Քաղա-քում արտադրվում է մեծ քանակությամբ մետաքս, ներկարարական բույ-սեր, արքայակադին և վայրի չաման, ունի բնտիր ջորիներ։

Բա՛յլա՛կան⁶⁶—բարիքներով լի մի փոքրիկ քաղաք է, որտեղ արտա-դրվում են մեծ քանակությամբ գծավոր կտորներ, թաղիք, քող և քաղց-րավենիք։

Բաժճաճ⁶⁷—մի փոքրիկ քաղաք է, տեղավորված Արաքս գետի ափին։ Այստեղ ձուկ է արտադրվում։

Դա՛նջա, Շա՛վքոր—երկու քաղաքներ են, առատ ցանքով և հացահա-տիկներով, շեն ու բարեբեր, որտեղ արտադրվում են ամեն տեսակի բրդե հագուստներ։

Խուճան⁶⁸—մարզ է Քուռ գետի ափին Արմինիա՛յի ու Ա՛րրանի սահ-մանի վրա։

Վա՛րդուկիա՛⁶⁹—Ուունանում գտնվող մի փոքրիկ և սակավամարդ քա-ղաք է։

Կա՛յա՛⁷⁰—մի խոշոր, դիտարանով⁷¹ բերդապարիսպ է Արմինիա՛յի ու Ա՛րրանի սահմանի վրա։

Թիֆլիս—մի մեծ կանաչավարդ քաղաք է, շեն ու կանգուն, լի բա-րիքներով։ Ունի երկու պարիսպ և բերդ է անհավատների դեմ։ Քուռ գետը նրա միջով է անցնում։ Քաղաքում կա մի աղբյուր խիստ տաք ջրով, որի վրա բաղնիքներ են կառուցել և որը շարունակ տաք է առանց կրակի⁷²։

Շա՛քի⁷³—շեն և բարեբեր, որի երկայնքը 70 ֆարսանգ է։ Այստեղ մու-սուլմաններ և անհավատներ են բնակվում։

Մուրարա՛քի—մեծ գյուղ է Բա՛րդա՛յի դռան մոտ (մատույցներում)։ Ռուսների բանակատեղին այստեղ էր, այն ժամանակ, երբ եկան և Բա՛ր-դա՛ն գրավեցին։ Այս Մուրարա՛քին Շա՛քիի սահմանի սկիզբն է⁷⁴։

Սուկ-ա՛լ-Ջա՛բա՛⁷⁵—Շա՛քիի քաղաքներից է, Բա՛րդա՛յին մոտ։

Սմբարմա՛ն⁷⁶—քաղաք է Շա՛քիի սահմանի վրա։ Ունի կանգուն մի բերդ։

Այս երկու քաղաքներն էլ շեն են։

Սա՛նառ⁷⁷—մի մարզ է, որի երկայնքը 20 ֆարսանգ է՝ Վտնվում է] Շա՛քիի և Թիֆլիսի միջև։ [Այստեղ] ամբողջ անհավատներ են։

Կա՛րա՛լա՛—քաղաք է Շա՛քիի և Շիրվանի միջև, շեն ու բարերեր։ Այստեղ շատ կաղին⁷⁸ է արտագրվում։

Ֆերդիջ—փոքրիկ, շեն և բարերեր քաղաք է։

Շիրվան⁷⁹, Խրսան⁸⁰, Լիրան⁸¹—երեք մարզեր են, որոնց թագավորը մեկ է։ Այս թագավորին Շիրվանշահ, Խրսանշահ և Լիրանշահ են կոչում⁸²։ Նա իր բանակի հետ նստում է Շա՛մախիից մեկ ֆարսանգ հեռու։ Նա Գուր-դա՛վանի⁸³ կողմերում ունի մի բարձր լեռ, որի զագաթը տափարակ է, հարթ ու քառակուսի, չորս ֆարսանգ, չորս ֆարսանգի վրա և ոչ մի կողմից ճամփա չունի բացի մի կողմից, որը կառուցել են և որը շատ դժվար[անցանելի] է։ Այս [լեռան] վրա կա չորս գյուղ, այս թագավորի բոլոր գանձերը և հարստությունները այստեղ են գտնվում։ Այստեղ բոլորը նրա [թագավորի] մեկվաներն (ազատագրված ստրուկներ) ⁸⁴ են։ Տղամարդ թե կին բոլորը այստեղ ցանում են ու այստեղ ուտում։ Այս բերդը կոչում են Նիալ։ Սրան շատ մոտ մի այլ բերդ էլ կա, մեկ ֆարսանգ հեռավորության վրա։ Նրա [թագավորի] բանտը այստեղ է։ Խրսանը փակ մարզ է։ Շիրվանը միացած է Կա՛րք լեռան։ Այստեղ արտագրվում են բրդե հագուստներ, և այն բոլոր զանազան տեսակի ծածկոցները⁸⁵, որ կան աշխարհի բոլոր կողմերում, այս երեք մարզերից են։

Քուրդա՛վան—փոքրիկ, շեն և բարերեր քաղաք է։

Շավրան⁸⁶—Շիրվանի կենտրոնն է։ [Սա] մի վայր է ծովի մոտ, լի բարիքներով։ Ամբողջ աշխարհի փորձաքարերը այստեղից են տանում։

Խա՛ղա՛րնների՝ Դա՛րբա՛նդ⁸⁷—ծովափնյա քաղաք է։ Այս քաղաքի և ծովի միջև մի հսկայական շղթա է ձգված, այնպես, որ ոչ մի նավ չի կարող ներս մտնել առանց թույլտվության։ Այս շղթան կապված է ամուր պատերի, որոնք կառուցված են քարով և կապարով։ Այստեղ արտագրվում են կտավե հագուստներ և շաֆրան։ Այստեղ ներմուծվում են ամեն ցեղի ստրուկներ սահմանամերձ անհավատների երկրներից։

Բաքու—փոքրիկ քաղաք է ծովի ափին, լեռան մոտ։ Որքան նավթ որ օգտագործում են Դեյլա՛մանի⁸⁸ կողմերում, այստեղից են տանում։

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

1. Կապուտան կամ Ուրմիո լիճը գտնվում է Հարավային Ադրեջանում։
2. Հուդուդ-ալ-ալամում լեռների նկարագրությունը հար և նման է թե՛ անտիկ հունական և թե՛ արարական աշխարհագրության մեջ ընդունված նկարագրություն։ Բոլոր ելունները համարվում են մեկ ընդհանուր լեռնաշղթայի բաղկացուցիչ մասերը և նույն լեռնաշղթան, անցնելով տարբեր երկրներից, յուրաքանչյուր երկրում կոչվում է տարբեր անունով։
3. Տեղանունների մեծ մասը Հուդուդ-ալ-ալամում տրված են հարազատ արտասանությամբ, առանց նշխարկելու արարական տառադարձություն։ Նմանապես և այստեղ արարական Ա՛ղարրայան (أغارار) անվան փոխարեն տրված է հին պարսկերեն Ա՛դրրա-դադան (آدرار) անունը։ Հայ մատենագրերի մոտ Ատրպատական, նաև Ատրպայական։
4. Բնագրում ۷۳۰ է այժմ կոչվում է Սափալան 4813 մետր բարձրությամբ, Հարավային Ադրեջանում։
5. Արար մատենագրերի մոտ Ա՛րրան (آرر) է կոչվել Աղվանքը կամ Եղվանից

աշխարհը», որը 10-րդ դարում ընդգրկում էր Քուռ և Արաքս գետերի միջև ընկած տե-
րիտորիան:

6. ԵՃԻ—Աղվանքի մայրաքաղաքը: Հայ մատենագրերի մոտ Պարտավ նաև Պարթավ:
Բելազորու և Յակութի մոտ կա նաև ԵՃԻ, ձևը:

7. Այս լեռնաշղթայի նկարագրության առաջին մասը համապատասխանում է ներ-
կայիս Իրանի, Իրաքի և Թյուրքիայի սահմաններով ձգվող լեռներին (Ջազրոս լեռներ):
Իսկ երկրորդ մասը համապատասխան է Ղարադաղի լեռներին:

8. Արար մատենագրերի մոտ համարյա առանց բացառության Մեծ Մասիսը կոչվում
է Հարեթ (Հرحه), իսկ Փոքր Մասիսը Հուվայրաթ (Հرحر): Հարեթ բառացի նշանակում է
«երկրագործ», իսկ Հուվայրաթ նույն անվան փոքրացուցիչ ձևն է: Հետևաբար լեռը կոչ-
վում էր «Երկրագործի լեռ»: Մեր կարծիքով սա հայկական Արարատ անվան արարացված
ձևն է: Եվսերեսոս կեսարացու «Որոնիկայի» մեջ կա Arath ձևը (տես Вестник древней
истории, 1941 г., т. III, էջ 220) որտեղ: Ինչպես տեսնում ենք, հապլուլոգիայի օրենքով
սղվել է «ար» վանկը և արարական տառադարձությամբ դարձել է Հرح: Իսկ սկզբի
չ բաղաձայնը ավելացվել է համապատասխան իմաստ ստանալու համար: Հատուկ անուն-
ների այսպիսի աղավաղումներ չափազանց շատ են արաբների մոտ, ինչպես, օրինակ,
Քլաթը դարձել են Ախլաթ, որը արաբերեն նշանակում է խառնուրդ և բացատրում են
այն բանով, որ այնտեղ բնակվում են թե՛ քրիստոնյաներ և թե՛ մահմեդականներ: Կոմ
Արաքսի փոխարեն գրում են Արբաս (أرباس) և այլն:

Արարատ լեռան լանջերին գտնվող անտառների և որսավայրերի մասին եղած տե-
ղեկությունները համապատասխան են Իսթախրու տված տեղեկություններին, մանավանդ,
որ հեղինակն ընդհանրապես բուհ (بو) ասելով, նկատի ունի ոչ շատ մեծ լեռնաշղթա,
ըստ որում խոսքը այստեղ ևս վերաբերում է ոչ թե միայն Մասիս լեռնագագաթին, այլ
Աղատ Մասիսին կամ Հայկական Պարին:

9. Ինչպես Ղուրանում, այնպես նաև արաբական, սիրիական և որոշ հայկական աղ-
բյուրներում Հյուսիսային Միջագետքում գտնվող Ջուզա լեռը հիշվում է որպես Նոյան
տապանի հանգրվան:

10. Բյուզանդական կայսրությունը թե՛ հայերի, թե՛ արաբների և թե՛ ընդհանրապես
Արևելքի բոլոր ժողովուրդների մոտ անվանվում էր Հոռոմ կամ Ռում, այն համարելով
հին Հոռոմեական կայսրության շարունակությունը: Դեռ ավելին՝ քրդերի մոտ ևս, ինչպես
նաև պարսկական աղբյուրներում, դեռ մինչև 19-րդ դարը Ռում էր կոչվում նաև օսմա-
նյան կայսրությունը:

11. Համապատասխանում է ներկայիս Դադստանին: Սարիր (ساریر) բառացի նշանա-
կում է գահ, որի մասին Յակուրին գրում է: «Այս գահը, որը ոսկուց էր շինված, ըստ
ավանդության Անուշիրավանն էր ուղարկել նրան (երկրի թագավորին), որի համար եր-
կիրը կոչվեց Սարիր»: Նույնը կրկնում է նաև Իրն-ալ-Աթիրը (տես Բ. Քալաթյանց,
«Արաք մատենագրեր հայաստանի մասին», էջ 107 և 138):

12. Եթ արար մատենագրերի մոտ հիշվում է համանուն երկիր Կովկասյան լեռնե-
րում, որի անունով և կոչվել է լեռնաշղթան: Պարսից գրականության մեջ նաև Գուհ-ե Կաֆ
(گوه کاف) Կովկասյան լեռնաշղթա:

13. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ նմանապես «Քաղաք»:

14. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ «Ալանաց աշխարհ», որը գտնվում էր Կովկասյան
լեռների հյուսիսում:

15. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը:

16. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը: Համանաբար Ուրալի կամ Վոլգայի բուլ-
ղարների մասին է խոսքը:

17. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը:

18. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը: Կուրանի պեղնեղների երկիրը: Կուրանի պեղնեղների երկիրը:

19. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը: Կուրանի պեղնեղների երկիրը:

20. Բնագրում ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը: Կուրանի պեղնեղների երկիրը:

21. ԵՃԻ հայ մատենագրերի մոտ հիշվում է Կուրանի պեղնեղների երկիրը: Կուրանի պեղնեղների երկիրը:

Բար-Ալլան անվան պարսկերեն Գար-ե-Ալլան անվան, ինչպես նույն աշխատության Ալանաց երկրին նվիրված բաժնում: Այժմ Դարիալի կիրճ:

22. Բնագրի անվան պետք է կարգալ անվան Ջարեյն, Ջարեյ կամ երկու Ջարեյ: Նույնը նաև Մասուգու մոտ:

23. անվան որոշ ազրյուններում նաև Վերին Ջար: Այժմ կոչվում է Ջարսու, նաև Ստորին Ջար: Ըստ Յակոբի, ոմն պարսից թագավոր է փորել տվել այս գետերը (իմա ջրանցքները): որոնք իր անունով կոչվում են Ջար: Թվում է նաև երկու այլ Ջար-բեր շարավային Միջագետքում՝ Վասիթի և Բաղդատի արանքում: որոնք նփրատ գետից են անջատվում:

24. անվան Տիգրիս գետն է: որը հիշատակված է միայն այս հատվածում:

25. անվան Յակոբի մոտ Սարոս (ساروس) է: որը գտնվում է Վասիթի մոտ, սակայն սխալվում է: երբ այն բխած է համարում Հայաստանի լեռներից: Սրանք հավանաբար ջրանցքներ են: որովհետև հեղինակը գետերին վերաբերող զլխի սկզբում նրանց բաժանում է երկու խմբի: արհեստական և բնական: բոլորում «Արհեստական են կոչվում նրանք, որոնք փորված են մարզկանց կողմից և որոնց ջուրը գործածվում է քաղաքի շենություն կամ ցանքերի ոռոգման համար» (տես «Худуд-Ал-Алем», էջ 8 6):

26. անվան նփրատ գետն է: Այս գետը նկարագրված է սկսած իր ակունքներից մինչև Վասիթի ծանծաղուտները: Մենք մեջ ենք բերել միայն այն մասի նկարագրությունը, որը հոսում է Հայաստանի տեղիտորիայով:

27. անվան բոլոր երևույթին աշխարհագիրը ի նկատի ունի Արածանիի բխման վայրը՝ Աղիովիտ կամ «Աղվո լեռներ»: այժմ Ալագադ:

28. Աշխարհագիրը ընթերցում է Ատրպատականի «Սփիդոուդ» (Սպիտակ գետ) կամ Կրդըլ-Ուղան գետը Փոքր Մասիսից հարավ: Իրանի և Թյուրքիայի սահմանադիմի լեռներից բխող Սպիտակ գետի կամ հին հայկական ճուղակներ, այժմ Աղշայ գետի հետ, որը թափվում է Արաքսի աջ վտակներից հարմիր գետի մեջ: Ըստ որում այս գետը ևս անցնում է Արաքսին մերձակա այն վայրերով: որոնք կոչվում էին Դիրան, հետագայում արաբացված ձևով՝ Ջիրան, իսկ 16—18-րդ դարերում Աղատ-Ջիրան:

29. անվան Կասպից ծովը, որը արարները և մինչև օրս նաև պարսիկները կոչում են Կովկաս լեռներից գետի հյուսիս նույն ծովի ափերին բնակվող խաղարների անունով:

30. անվան Արաքս գետն է: որ հիշված է երեք տարբեր արտասանություններով՝ Արոս, Արես և Արաս: Յակոբի մոտ Արոս (اروس) է: նույնը նաև Բելադորու, Յակուրու և այլ արաբ մատենագրերի մոտ:

31. Վարդանակերտ քաղաքն է Արաքսի աջ ափին, այժմյան Ասլանդուղի մոտ, հին Պարտավ—Արդարիլ զլխավոր ճանապարհի վրա: Ըստ Յակոբի՝ գետից մոտ մեկ ֆարսախ հեռու: Ըստ Իսթախրու՝ այստեղից մինչև Բայազան (Փայտակարան) քաղաքը յոթ ֆարսանգ էր:

32. անվան Քուռ գետն է: Համարյա բոլոր արաբ աշխարհագիրներին մոտ նմանապես և Հուգուդ-ալ-ալամում Քուռ գետի ակունքները տեղագրված են Կովկասյան լեռների հարավային փեշերին: Ըստ երևույթին նկատի են ունեցել նրա որևէ վտակը:

33. անվան Աղվանքի հնագույն մայրաքաղաքը: Հայ մատենագրերի մոտ Կասպակ քաղաք:

34. անվան Հայերեն Բերդիկ անվան արաբացված ձևն է: Դետանց Քուռ գետի վրա, մոտավորապես այժմյան Մինդեշաուրի մոտ, Աղբրեջանական ՍՍԻ:

35. անվան հնագույն ազրյուններում նաև Մովկան: Մուղան անունը արաբ մատենագիրների կողմից ստուգարանվում է չա-մոդ ան-եր-մոդեր: Այժմ էլ կոչվում է Մուլ-ղանի դաշտ, որը ձգվում է Ղարադաղի լեռներից մինչև Կասպից ծովի ափերը և բաժանված է երկու մասի՝ արևելյան մասը Աղբրեջանական ՍՍԻ-ում, իսկ արևմտյան մասը Հարավային Աղբրեջանում: Նշված Մուլկան քաղաքի տեղը գետես չի ճշտված:

36. անվան այժմ էլ Դիլանի նահանգ Իրանում: Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերին:

37. անվան ներկայիս Իրանի կենտրոնական և արևմտյան մասը, Ջանջան քաղաքից գետի հարավ մինչև Ֆարս նահանգը, իսկ գետի արևմուտք մինչև Միջագետք:

38. անվան Միջագետք:

39. 𐎧𐎠𐎡𐎹 Թակութը ստուգարանում է որպես 𐎧𐎠𐎡𐎹 (Ղաղիր) անվան հոգնակի ձև։ Հավանաբար «Խաղիրք»։

40. 𐎧𐎠𐎡𐎹 — (Ղաղիրներ)։ հավատի համար կովոզ զինվորներ, որտեղից և զազավաթ՝ սրբազան սյուսերագամ։

41. 𐎧𐎠𐎡𐎹 (զարիրան)։ օտարականներ րաւը դործածվում է օտար վաճառականների իմաստով, որոնք զալիս էին ապրանքափոխանակման համար, իսկ տեղացի վաճառականների համար գործ է ածված րաղերզան (𐎧𐎠𐎡𐎹) տերմինը։

42. 𐎧𐎠𐎡𐎹 (ջամե) րաուր մենք թարգմանեցինք հազուստ, պատրաստի հանդերձներ (իր ժամանակի հատուկ տարազ)։ Իսթախրու մոտ ևս նույն րաուն է դործածված Տրապի-դոն ներմուծվող հայկական բոզյուլնի, մարիգիլի և զիրակի մասին։ Հետևաբար պետք է կարծել, որ երկրից արտահանվում էին ոչ թե սոսկ գործվածքներ կամ կտորեղեն, այլ պատրաստի հազուստներ։ Որ 𐎧𐎠𐎡𐎹 — ջամե հազուստ է նշանակում կամ որոշ տեսակի հանդերձ, այդ պարզվում է նաև նույն գրքի մյուս զրուխների ընթերցումից, որտեղ քաղաքի բնակչության մասին խոսելիս, հատկապես շեշտելով նրանց մաքրասիրությունը, գրում է 𐎧𐎠𐎡𐎹 𐎧𐎠𐎡𐎹 𐎧𐎠𐎡𐎹 «այս քաղաքի մարդիկ մաքուր հազուստով են» (տես X, 35a) Ал-Алем», էջ 35a)։

43. 𐎧𐎠𐎡𐎹 (ոուղինե) րաուր իմաստը մեզ համար դժվար եղավ հաստատապես ճշտել։ Հուդուգ-ալ-ալամի վրացերեն թարգմանության մեջ այն թարգմանված է աղիքներ։ Սա, իհարկե, ամենից հավանականն է, թեև մեզ հայտնի չէ թե Վ. Փութուրիձեն ինչ հիման վրա է այդպես թարգմանել։ 𐎧𐎠𐎡𐎹 (ոուղե) նշանակում է աղիք, իսկ 𐎧𐎠𐎡𐎹 (ոուղ) րաուրովոր նվազարան է եղել, նման քնարի կամ տավրդի։ Պետք է ենթադրել, որ աղիքները հատուկ մշակման ենթարկվելուց հետո արտահանվում էին լարավոր երաժշտական գործիքների համար։ Դրա համար էլ մենք պայմանական ձևով ոուղինեն թարգմանեցինք «աղելարներ»։

44. 𐎧𐎠𐎡𐎹-րաուր նշանակում է «այստեղ է ընկնում»։ Սակայն պետք է կարծել, որ ժամանակին այս րաուր դործածվել է նաև ներմուծման իմաստով։ Նույնպես է թարգմանվում նաև Իսթախրու մոտ Հայաստանից Տրապիդոն ներմուծվող հայկական գործվածքների մասին եղած հատվածը։ Այնտեղ ևս նույն րայն է օգտագործված։ Նույն րայն է օգտագործված նաև զյուդաիստեսական և արհեստագործական ապրանքների ներմուծման մասին Հուդուգ-ալ-ալամի մյուս զրուխներում (տես Ուման քաղաքի մասին, էջ 34a, սիրիայի մասին էջ 34բ)։ այդ բանը ավելի բան հաստատվում է, երբ ի նկատի ունենանք, որ արտահանման մասին օգտագործվում է բոլորովին հակառակ իմաստ պարունակող 𐎧𐎠𐎡𐎹 (խիդադ) «բարձրանում է» րայր։

45. Բնագրում 𐎧𐎠𐎡𐎹 է, հավանաբար մոռացվել են 𐎧𐎠𐎡𐎹 կետերը։ Պետք է լինի 𐎧𐎠𐎡𐎹 Ուշնուհ, ինչպես Թակութի մոտ, որտեղ այս քաղաքը հիշված է Ուրմիայից երկու օրվա ճանապարհի վրա։ Թովմա Արծրունու մոտ «Շնաւ քաղաք»։ Հարավային Ադրբեջանի քաղաքներից է, Ուրմիո լճից դեպի հարավ-արևմուտք Իրանի, Թյուրքիայի և Իրաքի սահմանազրիսում։

46. Այժմ 𐎧𐎠𐎡𐎹 (Սարար) Արդարիլից դեպի Թավրիզ տանող ճանապարհի վրա։

47. 𐎧𐎠𐎡𐎹 արար մատենագրերի մոտ նաև 𐎧𐎠𐎡𐎹 (Միանաջ)։ այժմ Միանե, Հարավային Ադրբեջանի քաղաքներից, Թավրիզ—Թեհրան զրուսովոր ճանապարհի վրա։

48. 𐎧𐎠𐎡𐎹 արար մատենագրերի մոտ նաև 𐎧𐎠𐎡𐎹 (Խուենաջ)։ Ըստ Թակութի դեպի Ռեյ ձգվող ճանապարհի վրա, Մարագայի և Ջանջանի միջև, որը կոչվել է նաև 𐎧𐎠𐎡𐎹 (Քաղաղ քոնան=թուղթ պատրաստողներ)։ Այժմ համանուն զյուդ նույն շրջանում։

49. 𐎧𐎠𐎡𐎹 Թակութի մոտ նույնը, նաև 𐎧𐎠𐎡𐎹 (Ջարրավան), այլ աղբյուրներում նաև Գարրավան, որ պետք է թարգմանել կրակապաշտների ավան։ Քաղաքը գտնվելիս է եղել Մուղանի գաղտում, այժմյան սովետա-իրանական պետական սահմանի վրա։

50. 𐎧𐎠𐎡𐎹 Թովմա Արծրունու մոտ «Ալայ էմիր»։ Բուդայի գորականներից։ Թարարու մոտ կա հիշատակություն 865 թվականին նրա կատարած հարկահանությունների մասին Հայաստանում, տալիս է նաև նրա սպանվելու թվականը, 873 թիվ (տես Բ. Խալաթյանց «Արար մատենագրեր Հայաստանի մասին», էջ 101—102)։

51. Սաջյան էմիրները Ատրպատականում իշխել են 889 թվականից մինչև 930 թվականը, թե սրանցից որին է վերաբերում Մարագայի պարսպի ավերումը, դժվար է որոշել։

52. 𐎧𐎠𐎡𐎹 Թակութի և Իսթախրու մոտ նույնն է, ըստ վերջինիս, Արդարիլից 15 ֆարսանգ հեռու, Արդարիլ—Վարդանուկերտ ճանապարհի վրա։

ոջն «Մամլան որդի Աբլհաջի թոռն Ռովդայ ամիրայի Ատրպատականի» մասին, որը հայոց 447 (998 մ. թ.) գնում է Դավիթ Կյուրապաղատի դեմ պատերազմելու Մեծ հավանակա-
նությամբ Հուզուդ-ալ-ալամում հիշված Ռավադի որդին այս Մամլի հայրը՝ Աբլհաջը
պետք է լինի, որի որդին Ասողիկի մոտ հիշվում է որպես Ռովդի թոռ (տես Ստեփա-
նոս Տարոնացի Ասողիկ, «Պատմություն տիեզերական», երկրորդ հրատարակություն, Պե-
տերբուրգ, էջ 269—270)։

64. Բնագրի ٤٤٧-ը պետք է ուղղել և կարգալ ٤٤٧ (Սիսական), արար մատենա-
դրերի, ինչպես նաև Յակուբի և Իսթախրու մոտ ٤٤٧ (Սիսաջան)։ Ըստ Իսթախրու,
այստեղից մինչև Դվին 16 ֆարսանգ է։ Քաղաքը գտնվել է մոտավորապես այժմյան Բաշ-
Նորաշենի մոտ, Նախիջևանի ԱՍՍԻ։

65. Խոսքը Սյունյաց դահերեց իշխան Սմբատի մասին է, որը 970 թ. թագավոր էր
օծվել և նրա թագավորությունը պաշտոնապես ճանաչվել էր Սամանիդյան թագավոր
Նուհ-իբն Նասրի կողմից (տես Ստեփանոս Օրբելյան, «Պատմություն նահանգին Սիսա-
կան», Թիֆլիս, 1910, էջ 300)։

66. Պատմական Հայաստանի Փայտակարան քաղաքը։ Ըստ Իսթախրու այստեղից
մինչև Վարթան (Վարդանակերտ) 7 ֆարսանգ էր։

67. Այս քաղաքի մասին ոչ մի տեղ հիշատակություն չգտանք։ Սակայն անվան ստու-
գարանությունից (բոժ-գահ) կարելի է եզրակացնել, որ քաղաքը գտնվել է Ատրպատաց
կանի և Աղվանքի սահմանի վրա, որտեղից անցնող ապրանքներից բաժ (մաքս) է գանձ-
վել։ Հավանաբար գտնվել է Արդաբիլ—Պարտավ ճանապարհի վրա, Արաքս գետի ափին,
այժմյան Ասլանդուղի մոտ։

68. Խուսանի մարզը համապատասխանում է ներկայիս Ղազախի շրջանին մինչև
Բորչալու։

69. ٤٤٧, այլ մատենագրերի մոտ համապատասխան որևէ վայր չի նշված։ Կա-
ղանկատվացու մոտ կա Վարդեկրուակ լեռը, որը, սակայն, շատ հեռու էր հիշյալ մարզից։

70. ٤٤٧ — Յակուբի մոտ այս բերդը ևս կոչվում է Խուսան, որը կավաշեն է և
գտնվում է մի մեծ բլրի վրա։ Հավանաբար այժմյան Նոյեմբերյանի և Ղազախի սահմա-
նում Լամբալու գյուղի մոտ գտնվող Աղջակալան պետք է լինի, որը չթրծված աղյուսով
է կառուցված։

71. Տեքստի ٤٤٧ բառը, որ նշանակում է բեմ—(эстрада) Վ. Փոլթորիձեն համարել
է սխալ և դարձրել է ٤٤٧ (մաարար) ու թարգմանել անցք։ Սակայն սա ճիշտ չէ, որովհետև
այլ տեղերում ևս նույն տեղում է գործածված, ինչպես, օրինակ, ٤٤٧ (Ջաբալա) բերդի
մասին գրում է ٤٤٧ (٤٤٧) (տես «Худ.-Ал.-Алем», էջ 346)։ Խոսքը այստեղ վե-
րաբերում է պարսպի այն մասին, որտեղ կանգնում էին բերդապահ զինվորները և հե-
տևում թշնամու շարժումներին, որը մենք թարգմանեցինք «զիտարան»։

72. Վրաստանի մայրաքաղաքի հիշատակությունը այստեղ նույնպես հետևանք է
ոյն բանի, որ 10-րդ դարի վերջերին, այստեղ դեռ շարունակում էին տիրել արաբ էմիր-
ները, դրա համար էլ հեղինակը այն անվանում է «պարիսպ և բերդ անհավատների դեմ»։

73. Որպես առանձին մարզեր բացի Շաբիից հիշատակված են նաև Շիրվանը, Խըր-
սանը, Լիրանը, Մուկանը և Մեյմադը Աղբեջանում, Սիսականը Հայաստանում և Սա-
նարն ու Խուսանը Վրաստանում, որոնք 10-րդ դարում ինքնուրույն իշխանություններ
են եղել։

74. Ռուսների արշավանքը դեպի Պարտավ տեղի է ունեցել 943—94 թվականներին։
Այս մասին հիշատակություններ կան բազմաթիվ արաբ մատենագրերի, ինչպես նաև Մով-
սես Կաղանկատվացու մոտ (տես «Մովսեսի Կաղանկատվացու պատմութիւն Աղուանից
աշխարհի», Թիֆլիս, 1912 թ., էջ 385—386)։ Լավագույն աղբյուրը, որտեղ ավելի քան ըն-
դարձակ նկարագրված է արշավանքի մանրամասնությունները, պետք է համարել նույն
դարաշրջանի պատմիչ Իբն Մասկավայի ٤٤٧ (Ժողովուրդների փորձառությունների
գիրքը) աշխատությունը։ Ըստ Հայկական ՍՍԻ Միությունների Սովետին կից Պետական
Ձեռագրատան (Մատենադարան) № 2561 Կաղանկատվացու պատմության ձեռագիր օրի-
նակի, արշավանքին մասնակցել են ոչ ավել, քան 3000 ռուս զինվորներ (ըստ արաբ մա-
տենագիր Մասուդու, արշավանքը կատարվել է 50,000-անոց բանակով, 500 նավերով, յու-
րաքանչյուր նավակում 100 զինվոր)։

75. ٤٤٧ բառացի նշանակում է «Լեռան շուկա» կամ «Լեռնային շուկա»։ Քաղաքը,
ինչպես ասված է, պետք է բավական մոտ եղած լինի Պարտավին, սակայն այն համարվել

է Շաբթի քաղաքներից: Ինչպես Մուրաբաթիի, այնպես էլ Սուկ-ալ Զարալի տեղադրութեանը վերաբերող տեղեկութիւններից կարելի է ենթադրել, որ Շաբթի սահմանները տարածված են եղել մինչև Քուէի ափերը, ընդհուպ մինչև Պարտալի մատուցները:

76. ܩܠܬܝܢܐ—հավանաբար Սմրատական, որի մասին սակայն մեզ ծանոթ հայ և օտար աղբյուրներում ոչ մի հիշատակութիւն չգտանք: Եղել է սահմանամերձ բերդ, որի անվան մեջ թերևս պահպանված է Շաբթի իշխան Սահյ-Իրն Սմրատի անունը:

77. ܩܬܝܢܐ հայ մատենագրերի մոտ Մանարը Արարների մոտ Սանար է կոչվել Կախեթից հյուսիս ընկած լեռնային շրջանները:

78. Բնագրի ܩܬܝܢܐ գրութիւնը անվերծանելի է: Վ. Փութուրիձեն նմանեցրել է ܩܬܝܢܐ-ի (որդան-կարմիր), սակայն սա մեզ հավանական չի թվում: Այլիի հավանական է, որ թերևս վերջի չ տառը զրչի սխալի հետևանք լինի, որը փոխելով չ ով կարելի է կարդալ ܩܬܝܢܐ (կաղին):

79. Այս մարդը 10-րդ դարում տարածվում էր Դերբենդից դեպի հարավ ընկած ծովափնյա շրջանում: Սակայն հետադարձում այն ավելի ընդարձակվեց և 12—13-րդ դարերում արդեն Շիրվան ասելով հասկանում էին Կասպից ծովից մինչև Քուէ գետն ընկած ամբողջ տերիտորիան, որի թագավորները կոչվում էին Շիրվանշահներ:

80. ܩܬܝܢܐ Բակութի մոտ ܩܬܝܢܐ (Խերս), ամբողջ Կասպից ծովի ափին: Այս մարդը տառածվում էր Շիրվանից հարավ մինչև Ապշերոնի թերակղզին:

81. ܩܬܝܢܐ Բեյլագորու մոտ ܩܬܝܢܐ (Լիրանշահ): Ըստ Մարկվարտի պետք է կարդալ ܩܬܝܢܐ (Իրան) և ܩܬܝܢܐ (Իրանշահ): Ըստ Քալաթյանցի, սա համապատասխանում է Կաղանկատվացու մոտ Եռանշահի անվան: Այս մարդը գտնվում էր այժմյան Շամախիի շրջանում:

82. Պարզվում է, որ 10-րդ դարում արդեն երեք մարդերը գտնվում էին մեկ թագավորի իշխանութեան տակ և այդ թագավորը իրեն կոչում էր երեք երկրների անունով: Վերջում այս երեքից պահպանվեց միայն Շիրվանշահ անունը, որը դործածվում էր մինչև ուշ ժամանակներ:

83. ܩܬܝܢܐ նաև Քուրդկան, քաղաք Շամախիից դեպի արևմուտք, որտեղից երկու ճանապարհ էր բաժանվում, մեկը հարավ՝ դեպի Վարդանակերտ, իսկ մյուսը հյուսիս՝ դեպի Պարտալ և Թիֆլիս:

84. ܩܬܝܢܐ նշանակում է ազատագրված ստրուկ (вольноотпущенник): Այդպիսիք էին այն բոլոր թուրք ռազմագերիները և ստրուկները, որոնք ազատվում էին ստրկութիւնից և մտնում խալիֆաթի զվարդիայի մեջ: Արբասյանների զվարդիան հիմնականում սրանցից էր կազմված: Թերևս ելնելով այս նույն օրինակից, ակադ. Վ. Վ. Բարտոլդը հիշյալ վայրում բնակիչներին համարում է Շիրվանշահի զվարդիայի զինվորներ, մանավանդ, որ արբուսի գանձարանը ևս այստեղ է պահվել (В. В. Бартольд, „Место прикаспийских областей в истории мусульманского мира“, Баку, 1925, էջ 37): Դժվարանում ենք ընդունել այդ կարծիքը, որովհետև նույն աղբյուրի վկայութեամբ Շիրվանշահի նստավայրը իր բանակի հետ միասին գտնվում էր Շամախիից մեկ ֆարսանգ հեռու գտնվող բանակավայրում, որտեղ և պետք է լինեն նաև արբուսական զվարդիան: Բայց անգամ եթե ընդունելու լինենք, որ այստեղ խոսքը արբուսական զվարդիայի մասին է, ապա միաժամանակ պետք է ընդունենք, որ նրանք ամբողջած են եղել հիշյալ վայրին և, որ կարևորն է, զբաղվել են երկրագործութեամբ: Դժվար է որոշակի կարծիք հայտնել հիշյալ վայրի բնակիչների սոցիալական դրութեան մասին և ընդհանրապես բնագրի այս հատվածը կարոտ է ավելի բազմակողմանի և մանրամասն ուսումնասիրության:

85. ܩܬܝܢܐ խոսքը այստեղ վերաբերում է ճանապարհորդութեան կամ բեռների փոխադրութեան ժամանակ գործավող ծածկոցներին, որոնք օգտագործվում էին անձրևից պաշտպանվելու համար: Վ. Փութուրիձեն փորձում է այս բառը բացատրել արաբերեն եռարմատ ܩܬܝܢ (փորել) բայի օժանդակութեամբ, որը մեզ թվում է անհավանական մանավանդ, որ ܩܬܝܢ փորագրութեան իմաստ չի պարունակում, փորագրութեան համար կա ܩܬܝܢ իսկ ܩܬܝܢ քայքայ օգտագործվում է հորերի, ջրանցքների փորման իմաստով, բայց երբեք փորագրութեան:

86. Արար մատենագրերի մոտ նաև ܩܬܝܢܐ (Շարուրան): Քաղաք Դերբենդից հարավ:

87. ܩܬܝܢܐ արար մատենագրերի մոտ նաև ܩܬܝܢܐ Բար-ուլ-արվար—գուռն զրանց: Հայ մատենագրերի մոտ «Դարբանդու գուռ» կամ «Ճորապահակ»:

88. ܩܬܝܢܐ ներկայիս Գիլանի և Մաղանդարանի մարզերը, որոնք կոչվում էին այստեղ իշխող Դելլամյան զինաստիայի անունով:

